non maxi standart

ԵԱՏՄ-Ն՝ հայկական պահածոների սպառման աշխարհագրություն

«Vilfood». «Անցումը ԵԱՏՄ-ին սահուն էր և բիզնեսի համար նպաստավոր»»

ԵԱՏՄ անդամակցությունը՝ շահեկան

Հայրենական արտադրության պահածոները դուրս են եկել ԵԱՏՄ շուկա: Հրազդանում գործող «Vilfood» ՍՊԸ-ն, օգտվելով տնտեսական միության տարածքում գործելու արտոնություններից, արտահանման մի քանի հաջող փորձ է կատարել դեպի ռուսական շուկա: Հաշվի առնելով, որ հայկական գյուղմթերքը սիրված է նաև արտերկրում, իսկ պահածոների արտադրության ոլորտում մրցակցությունը մեծ է Հայաստանում՝ արտահանումն է դարձել «Vilfood»-ի հիմնական ուղղությունը, իսկ համապատասխան ծավալների ապահովումը՝ գերխնդիր: Ընկերության տնօրեն Արմեն Առաքելյանը՝ որպես բիզնես դաշտի ներկայացուցիչ, Հայաստանի՝ ԵԱՏՄ անդամակցությունը շահեկան է համարում՝ սեփական փորձից ելնելով. «Միության տարածք արտահանում կատարելիս մաքսազերծումը նախկինի պես մի քանի օր չի տևում. բեռնատարը միանգամից ուղղորդվում է գործընկերոջ պահեստ, իսկ համագործակցող կազմակերպություններն առավելագույնը մեկ ամսվա ընթացքում վճարում են ԱԱՀ-ն»: Ընկերությունը չ ի շտապում արտահանման այլ ուղղություններով աշխատել՝ զգուշանալով Եվրոպայի սպառողական ճաշակի տարբերությունից և առայժմ գերադասում է օգտվել մաքսային միության նպաստավոր պայմաններից: Գործարար Արմեն Առաքելյանը ստեղծել է նաև պահածոյագործությունն սպասարկող ենթակառուցվածք՝ կափարիչի արտադրությամբ զբաղվող «Eurocup» ընկերությունը, որի արտադրանքի 20%-ն իրացվում է տեղական շուկայում, իսկ 80%-ն արտահանվում է: Ա. Առաքելյանն առաջարկում է բիզնեսին ընդառաջ ևս մեկ քայլ կատարել այս ոլորտում. «Երրորդ երկրից մետաղական հումքը ներկրելով և պատրաստի արտադրանքն արտահանելով ԵԱՏՄ անդամ Ռուսաստան՝ այսօր ԱԱՀ ենք վճարում, որը վերադարձվում է 3 ամիս հետո միայն՝ առաջացնելով շրջանառու միջոցների դեֆիցիտ: Այս բարդություններից տնտեսվարողին ազատելու համար կառաջար-

կեի, որ մուծված ԱԱՀ-ն գրանցվեր սահմանին, և հաջորդ ներմուծման ժամանակ տնտեսվարողի կատարած վճարումն այդ չափով նվազեցվեր»:

Նպաստավոր հարկային դաշտ

Երկու կազմակերպություններ ներկայացնող Արմեն Առաքելյանը նշում է, որ ԵԱՏՄ-ի շրջանակում գործելու կարգին տեղեկանալու և հարմարվելու գործընթացը սահուն է կազմակերպվել: Նա նաև համոզված է, որ աստիճանաբար ավելի կպարզեցվեն ընթացակարգերը ինչպես արտաքին տնտեսական գործունեություն իրականացնողների, այնպես էլ տեղական արտադրողների համար: «Մեր գործունեությանն անմիջապես առնչվող նպաստավոր պայմաններից է բազմակի օգտագործման տարայի՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ չհանդիսանալը, ինչը հնարավորություն է տալիս մթերման ծանր ժամանակահատվածում ժամանակին կատարել վճարումները գյուղացուն»,-նշում է Արմեն Առաքելյանը: Ըստ նրա՝ միակ բարդությունը դրոշմապիտակների հետ է կապված, քանի որ դրանք փակցնելու համար առանձին աշխատող են ընդունել. «Գործընթացի նպատակայնությունը չեմ տեսնում ներմուծվող ապրանքների դեպքում, որոնք արդեն հստակ գրանցվում են մաքսային սահմանին. ի՞նչ անհրաժեշտություն կա ավելորդ ծախս կատարելու»,-կարծում է գործարարը: Մյուս կողմից նա ենթադրում է, որ գուցե կան ընկերություններ, որանք զարտուղի ճանապարհներ են գտնում, հետևաբար նրանց օրինական դաշտ բերելու համար այս մեխանիզմն արդարացված է համարում:

Ավանդույթների պահպանում՝ նորարարությանը համընթաց

«Vilfood» ՍՊԸ-ն գրոյից է հիմնել ու զարգացրել պահածոների գործարանը: Ժամանակին համընթաց քայլելով՝ ընկերությունը ներդնելու է իտալական նոր սարքավորումներ: Սպառման ծավալների ավելացմանը կհաջորդի նոր հոսքագծերի գործարկումը: «Պետք է հասնենք նրան, որ արտադրանքի ինքնարժեքը ցածր լինի, իսկ որակը բարձր, որպեսզի մեծ ծավալներով կարողանանք ռուսաստանյան շուկայում սպառման մեր ցանցը ձևավորել»,-նկատում է Արմեն Առաքելյանը: Հայկական խոհարարական ավանդույթները և արևահամ գյուղմթերքը համադրելով արտադրության ժամանակակից տեխնոլոգիաների ու հայրենական արտադրանքը լավագույն ձևով ներկայացնելու պատվախնդրության հետ՝ ընկերությունն ստանում է բարձրորակ արտադրանք: «Թե՛ որակական, թե՛ համային հատկանիշներով հայկական մթերքը դրսի շուկայում համարվում է «պրեմիում» դասի, և մենք աշխատում ենք ամենաբարձր մակարդակի վրա պահել սանիտարահիգիենիկ պայմանները՝ ձեռք բերված համբավը պահպանելու համար»,-վստահեցնում է Ա. Առաքելյանը: Հատկանշական է, որ գործարանը, գտնվելով Հրազդանում, աշխատատանքով է ապահովում քաղաքի և հարակից շրջանների բնակիչներին: